**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 20 ապրիլի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Մ. Թոփուզյանի

Քննության առնելով քաղաքացի Արտակ Ղազարյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Քաղաքացի Արտակ Ղազարյանը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 02.04.2012թ.: Դիմողը խնդրել է որոշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի $169^8$-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 22-րդ եւ 31-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողի կարծիքով՝ վերոնշյալ օրենսգրքի՝ «Գործատուի կողմից աշխատավարձ չհաշվարկելը եւ (կամ) չվճարելը» վերտառությամբ $169^8$-րդ հոդվածն իր բնույթով տուգանք է նախատեսում մեղքի բացակայության պայմաններում: Հետեւաբար, ըստ դիմողի, անձը զրկվում է իր վարքագծի՝ նշված նորմով սահմանված գործողությունների կամ անգործության հետ համապատասխանեցման հնարավորությունից:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 եւ 69-րդ հոդվածների պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Քաղաքացի Արտակ Ղազարյանի անհատական դիմումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[8]-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, ընդունել քննության, կազմել գործ:

2. Գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

20 ապրիլի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-8